ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/13-2

ք. Երևան «29» հունիսի 2018թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր՝ Ա.Թարվերդյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նարգար>>ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Արմեն Հասանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Հնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1475082 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար ութսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

1 Եթե Վաճառողի կողմից գնահատված գները ներկայացվում են առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագրի գինը կազմում է ԱԱՀ-ն չպարունակող գինը: Գները հանվում են:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

2 Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի դրույթներին համապատասխան կնքվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան Երևան,Տերյան 74 ՀՎՀՀ՝ 01507028 ՀՎՀՀ՝ 247010053103 <<Գնորդ հինբանկ>> ՓԲԸ /ստորագրություն/ Կ.Տ	<<Նարգար>> ՍՊԸ Ք. Իջևան, Երիտասարդական 1/5 <<ՀԷԲ>> ԲԲԸ, Իջևան մ/ճ Հ/Հ 163508008774 ՀՎՀՀ 07614133 Հեռ. 093-74-44-17,0263-4-00-64 Էլ. փոստ: armenhasanyan@mail.ru /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«29» 06 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
3	42131170	Ջրի փական Ø 2	Sena ֆիրմայի ՀԺՀ	Ջրի փական Ø 2, խառնիչային տիպի երկու կողմերը էգ	հատ	4650	18600	4	ք.Երևան, Տերյան 74	4	հունիս
6	44111413	Ներկ սպիտակ	Պոլիսան ՍՊԸ Ուկրաինա	Սպիտակ գույնի յուղաներկ, նախատեսված են շենքերի արտաքին եւ ներքին հարդարման աշխատանքների (բացառությամբ հատակի ներկման), ինչպես նաեւ մետաղյա եւ փայտյա իրերի ներկման համար: Յուղաներկերում թաղանթագոյացնող նյութի զանգվածային մասը պետք է լինի 20%-ից մինչեւ 34%, պայմանական մածուցիկությունը՝ ըստ B 3- 4 մածուցիկաչափի (20±0,5) 0C, 65-160 վ, 2002 Անվտանգությունը՝ ԳOUS 10503-71	կգ	870	26100	30	ք.Երևան, Տերյան 74	30	հունիս
7	44411740	Զուգարանակոնք	Ռուսա	Զուգարանակոնքի կոմպլեկտ,	հատ	26100	52200	2	ք.Երև		

			Կերամիկ ՍՊԸ ՌԴ	կոյուղու միացումը ուղիղ դեպի պատ, լվացման տեսակը՝ վակուումային: Կոմպլեկտը ներառում է զուգարանակոնքը, ջրամանը, կափարիչը եվ մեխանիզմը:					ան, Տերյան 74	2	հունիս
9	42131480	Դռան փականի միջուկ	Բովոս ֆիրմայի ՉԺՀ	ՄԴՖ-ից պատրաստված դռների համար, երկկողմանի 6 կամ 7 սմ երկարության	հատ	798	7980	10	ք.Երևան, Տերյան 74	10	հունիս
10	31684400	Էլ. Վարդակ դրսի	Sunart ֆիրմայի ՉԺՀ	Վարդակ 1 տեղանոց պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 ՕՄ, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»	հատ	336	40320	120	ք.Երևան, Տերյան 74	60 60	հունիս հուլիս
11	31211200	Էլ. Անջատիչ	Sunart ֆիրմայի ՉԺՀ	220V, սպիտակ պլաստմասե, մեկ տեղանոց, պատի մեջ տեղադրվող	հատ	468	4680	10	ք.Երևան, Տերյան 74	10	հունիս
12	31686000	Էլ. Խրոց	Sunart ֆիրմայի ՉԺՀ	Էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ ըստ ԳՕՍՏ Ռ 51322.1-99 ԳՕՍՏ 7396.1-89 կամ համարժեք, արտասահմանյան արտադրության կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման	հատ	180	9000	50	ք.Երևան, Տերյան 74	25 25	հունիս հուլիս

				էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»							
14	44163170	Ռետինե խողովակ	Սենա շին ՍՊԸ ՀՀ	Կանաչապատ տարածքները ոռոգելու համար, 1/2"- չափի	մետր	180	14400	80	ք.Երևան, Տերյան 74	80	հունիս
15	44411100	Ջրի ծորակ ցնցուղով	Diablo ֆիրմայի ՉԺՀ	Չժանգոտվող մետաղից, տաք և սառը ջրի միացումով, ճկուն խողովակով մինչև 1.5մ երկարությամբ և դուշի գլխիկով	հատ	5700	57000	10	ք.Երևան, Տերյան 74	10	հունիս
16	44821000	Լաք պարկետի	Պոլիսան ՍՊԸ Ուկրաինա	Լաք մանրահատակի համար, բաց դեղնավուն, թափանցիկ մածուցիկ հեղուկ, խտությունը ոչ պակաս՝ 800 կգ/մ3, պայմանական մածուցիկությունը ըստ B3-4 մածուցիկաչափի՝ ոչ պակաս 30 վ, չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 40 %, ըստ տեխնիկական փաստաթղթի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Ն որոշմամբ հաստատված «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգի»	լիտր	1350	13500	10	ք.Երևան, Տերյան 74	10	հունիս
29	31411100	Էլ. Մարտկոց (էլեմենտ)	Camelion ֆիրմայի Թուրքիա	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,36 հատը՝ 1.5վ, AA ալկալիական,առնվազը մեկ տարվա պիտանելիության ժամկետով, 36 հատը՝ 1.5վ, AAA ալկալիական, առնվազը մեկ տարվա պիտանելիության ժամկետով և 8 հատը՝ 1.5վ, D ալկալիական, առնվազը մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	հատ	96	7680	80	ք.Երևան, Տերյան 74	80	հուլիս

36	39221410	Ավել	Սենա շին ՍՊԸ ՀՀ	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ	հատ	894	205620	230	ք.Երևան, Տերյան 74	92 138	հուլիս օգոստոս
37	39839200	Գոգաթիակ	Ջավելեքս ՍՊԸ ՀՀ	Պլաստմասսայից՝ տարբեր գույների,	հատ	144	5760	40	ք.Երևան, Տերյան 74	16 24	հուլիս օգոստոս
38	31651400	Մեկուսիչ ժապավեն /իզոլենտ/	Vinitap ֆիրմայի Ճապոնիա	Հոսանքի մեկուսիչ ժապավեն ինքնակպչուն, գլանափաթեթված, 15մմ լայնությամբ, 10մ երկարությամբ:	հատ	150	8400	56	ք.Երևան, Տերյան 74	56	հուլիս
39	44411100	Ջրի ծորակ ½ դույմ	Sena ֆիրմայի ՉԺՀ	Ջրի ծորակ ½ դույմ պլաստմասե, կես պտույտով աշխատող	հատ	570	30780	54	ք.Երևան, Տերյան 74	27 27	հուլիս օգոստոս
40	31531100	Էլ. Լամպ 100 Վտ	Կալաշնիկով ՍՊԸ ՌԴ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 100Վտ հզորությամբ,թափանցիկ,տանձաձև կամ սնկաձև Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”:	հատ	93	12090	130	ք.Երևան, Տերյան 74	52 78	հուլիս օգոստոս
41	31512430	Շիկացման լամպ 100	Կալաշնիկով ՍՊԸ ՌԴ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 100Վտ հզորությամբ,թափանցիկ,տանձաձև կամ սնկաձև Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն	հատ	93	46500	500	ք.Երևան, Տերյան 74	200	հուլիս

				որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”:						300	օգոստոս
42	31531220	Էլ. Լամպ 150 Վտ	Կալաշնիկով ՍՊԸ ՌԴ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 150 Վտ հզորությամբ,թափանցիկ,տանձաձև կամ սնկաձև Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”:	հատ	192	3072	16	ք.Երևան, Տերյան 74	8 8	հուլիս օգոստոս
43	31512430	Շիկացման լամպ 150	Կալաշնիկով ՍՊԸ ՌԴ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 150 Վտ հզորությամբ,թափանցիկ,տանձաձև կամ սնկաձև Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”:	հատ	192	5760	30	ք.Երևան, Տերյան 74	15 15	հուլիս օգոստոս
44	31521220	Էկոնոմ լամպ 40W	Liside ֆիրմայի ՉԺՀ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50Հց հաճախականության 40 Վտ հզորությամբ,խողովակաձև: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված “Ցածր	հատ	780	39000	50	ք.Երևան, Տերյան 74	25	հուլիս

				լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"						25	օգոստոս
48	44521170	Կողպեք կախովի	Lu SCHin ֆիրմայի ՀԺՀ	Մետաղական, միջին չափերի, լայնությունը 5-7 սմ:	հատ	660	9900	15	ք.Երևան, Տերյան 74	6 9	հունիս հուլիս
49	44511110	Բահ փորելու	Մագնիպս պալ ՍՊԸ ՌԴ	Երկարությունը՝ 110սմ, կտրող մասի երկարությունը-25սմ, լայնությունը 20սմ, կոթը՝ փայտից d=35 մմ, երկարությունը 85 սմ:	հատ	1620	12960	8	ք.Երևան, Տերյան 74	8	հունիս
52	18141100	Ձեռնոց բանվորական 1	Արթիկիկար ՍՊԸ ՀՀ	Ձեռնոց բանվորական S 10, պատրաստված լատեքսով մշակված 70% բամբակե, 30 % պոլիէստեր, մանժետը ռեզինե գործվածքից, նախատեսված է մետաղի և ապակու հետ անվտանք աշխատելու համար, չափը՝ 10:	զույգ	150	6000	40	ք.Երևան, Տերյան 74	40	հունիս
53	31684400	Վարդակ	Sunart ֆիրմայի ՀԺՀ	Վարդակ 1 տեղանոց պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 OM, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»	հատ	468	4680	10	ք.Երևան, Տերյան 74	5 5	հունիս հուլիս
54	31686000	Խրոցակ	Sunart ֆիրմայի	էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ ըստ ԳՕՍՏ Ռ 51322.1-99 ԳՕՍՏ 7396.1-89 կամ համարժեք, արտասահմանյան արտադրության կամ համարժեք: Անվտանգությունը՝	հատ	180	5400	30	ք.Երևան, Տերյան 74	15	հունիս

			ՀԺՀ	ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»						15	հուլիս
58	44521100	Փական կախովի	Lu SCHin ֆիրմայի ՀԺՀ	Կախովի փական միջին չափի, երկաթյա	հատ	660	3300	5	ք.Երևան, Տերյան 74	5	հուլիս
59	44521120	Փական ներքին	Բոկոս ֆիրմայի ՀԺՀ	փայտից կամ ՄԴՖ-ից պատրաստված դռների համար, երկկողմանի բռնակով, 154x60x14	հատ	2700	108000	40	ք.Երևան, Տերյան 74	20 20	հուլիս օգոստոս
62	31531600	Լուսատու ցերեկային 120սմ	Tinko ֆիրմայի ՀԺՀ	220V, 36 Վտ, նախատեսված սենյակային լուսավորության համար, սպիտակ պլաստմասե, նիկելապատ ցանցով	հատ	5370	107400	20	ք.Երևան, Տերյան 74	20	օգոստոս
63	31521560	Լուսադիոդային լուսատու 50w	K2 ֆիրմայի Թուրքիա	Արտաքին լուսավորության համար, պատին ամրացվող, դիոդային կետիկավոր լամպերով, սպիտակ լույսով, 220V, 50Վտ	հատ	6150	36900	6	ք.Երևան, Տերյան 74	6	օգոստոս
66	31211200	Անջատիչ ներսի	Sunart ֆիրմայի ՀԺՀ	220V, սպիտակ պլաստմասե, մեկ տեղանոց, պատի մեջ տեղադրվող	հատ	468	46800	100	ք.Երևան, Տերյան 74	100	օգոստոս
67	31211200	Անջատիչ դրսի	Sunart ֆիրմայի ՀԺՀ	220V, սպիտակ պլաստմասե, մեկ տեղանոց, պատի վրա տեղադրվող	հատ	330	16500	50	ք.Երևան, Տերյան 74	50	օգոստոս
68	31684400	Վարդակ ներսի	Sunart ֆիրմայի	Վարդակ 1 տեղանոց պլաստմասե , սպիտակ, պատի մեջ տեղադրվող, 220V	հատ	468	46800	100	ք.Երևան, Տերյան	100	օգոստոս

			ՉԺՀ						ն 74		
69	31512430	Էլ. Շիկացման լամպ 500 Վտ	Կալաշնիկով ՍՊԸ ՌԴ	220 V, 500 Վտ, սովորական կոթառով	հատ	660	6600	10	ք.Երևան, Տերյան 74	10	հուլիս
70	39221420	Խոզանակ պոչով	Ջավալեքս ՍՊԸ ՀՀ	Նախատեսված հատակ մաքրելու համար, 1.5մ երկարությամբ պոչով	հատ	1380	27600	20	ք.Երևան, Տերյան 74	10 10	հուլիս օգոստոս
71	18141100	Բանվորական ձեռնոց	Արթիկիկար ՍՊԸ ՀՀ	Ձեռնոց բանվորական S 10, պատրաստված լատեքսով մշակված 100 % բամբակե կտորից, մանժետը ռեզինե գործվածքից, նախատեսված է մետաղի և ապակու հետ անվտանք աշխատելու համար, չափը՝ 10,5:	հատ	144	14400	100	ք.Երևան, Տերյան 74	50 50	հուլիս օգոստոս
76	39839100	Գոգաթիակ ավելի հետ	Ջավալեքս ՍՊԸ ՀՀ	Աղբը հավաքելու համար, ձողով, ավելով ՀՍ 124-2007 կամ համարժեք: Տարողունակ գոգաթիակ, 27*23սմ+ավել, 104սմ	հատ	1080	10800	10	ք.Երևան, Տերյան 74	10	օգոստոս
78	44322220	Մալուխ պղնձե	Էլ առ ֆիրմայի ՀՀ	Էլեկտրոհաղորդալար պղնձե, 2.5 մմ քառ.	մետր	198	11880	60	ք.Երևան, Տերյան 74	60	հուլիս
79	31331140	Մալուխ	Էլ առ ֆիրմայի ՀՀ	ԱՎՎԳ 4x35 չափի, հոսանքի գծեր քաշելու համար	մետր	1140	342000	300	ք.Երևան, Տերյան 74	300	հուլիս
82	44331300	Մետաղալար 1	Ցիսյավի ֆիրմայի Ուկրաինա	Փափուկ, պողպատ 1,2մմ	կգ	690	3450	5	ք.Երևան, Տերյան 74	5	հունիս
83	44331300	Մետաղալար 2	Ցիսյավի ֆիրմայի Ուկրաինա	Փափուկ, պողպատ 3,0մմ	կգ	690	3450	5	ք.Երևան, Տերյան 74	5	հունիս

91	18141100	Զեռնոց բանվորական 2	Արթիկիկա ր ՍՊԸ ՀՀ	N10 չափսի 102131	զույգ	246	41820	170	ք.Երևան, Տերյան 74	170	հունիս

ԳՆՈՐԴ

Հայաստանի ազգային
ագրարային համալսարան
ք. Երևան,Տերյան 74
ՀՎՀՀ՝ 01507028
ՀԾՀ՝ 247010053103
«Գանձապետարան» ՓԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Նարգար>> ՍՊԸ
Ք. Իջևան, Երիտասարդական 1/5
<<ՀԷԲ>> ԲԲԸ, Իջևան մ/ճ
Հ/Հ 163508008774
ՀՎՀՀ 07614133
Հեռ. 093-74-44-17,0263-4-00-64
Էլ. փոստ: armenhasanyan@mail.ru

/ստորագրություն/
Կ.Տ

«29» 06 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	42131170	Ջրի փական Ø 2	... %	... %	... %	... %	... %	18600	... %	... %	... %	... %	... %	... %	18600
6	44111413	Ներկ սպիտակ	... %	... %	... %	... %	... %	26100	... %	... %	... %	... %	... %	... %	26100
7	44411740	Զուգարանակոնք	... %	... %	... %	... %	... %	52200	... %	... %	... %	... %	... %	... %	52200
9	42131480	Դռան փականի միջուկ	... %	... %	... %	... %	... %	7980	... %	... %	... %	... %	... %	... %	7980
10	31684400	Էլ. Վարդակ դրսի	... %	... %	... %	... %	... %	20160	20160	... %	... %	... %	... %	... %	40320

11	31211200	Էլ. Անջատիչ	... %	... %	... %	... %	... %	4680	... %	... %	... %	... %	... %	... %	4680
12	31686000	Էլ. Խրոց	... %	... %	... %	... %	... %	4500	4500	... %	... %	... %	... %	... %	9000
14	44163170	Ռետինե խողովակ	... %	... %	... %	... %	... %	14400	... %	... %	... %	... %	... %	... %	14400
15	44411100	Ջրի ծորակ ցնցուղով	... %	... %	... %	... %	... %	57000	... %	... %	... %	... %	... %	... %	57000
16	44821000	Լաք պարկետի	... %	... %	... %	... %	... %	13500	... %	... %	... %	... %	... %	... %	13500
29	31411100	Էլ. Մարտկոց (էլեմենտ)	... %	... %	... %	... %	... %	... %	7680	... %	... %	... %	... %	... %	7680
36	39221410	Ավել	... %	... %	... %	... %	... %	... %	82250	123370	... %	... %	... %	... %	205620
37	39839200	Գոգաթիակ	... %	... %	... %	... %	... %	... %	2300	3460	... %	... %	... %	... %	5760

38	31651400	Մեկուսիչ ժապավեն /իզոլենտ/	... %	... %	... %	... %	... %	... %	8400	... %	... %	... %	... %	... %	8400
39	44411100	Ջրի ծորակ ½ դույմ	... %	... %	... %	... %	... %	... %	15390	15390	... %	... %	... %	... %	30780
40	31531100	Էլ. Լամպ 100 Վտ	... %	... %	... %	... %	... %	... %	4840	7250	... %	... %	... %	... %	12090
41	31512430	Շիկացման լամպ 100	... %	... %	... %	... %	... %	... %	18600	27900	... %	... %	... %	... %	46500
42	31531220	Էլ. Լամպ 150 Վտ	... %	... %	... %	... %	... %	... %	1536	1536	... %	... %	... %	... %	3072
43	31512430	Շիկացման լամպ 150	... %	... %	... %	... %	... %	... %	2880	2880	... %	... %	... %	... %	5760

44	31521220	Էկոնոմ լամպ 40W	... %	... %	... %	... %	... %	... %	19500	19500	... %	... %	... %	... %	39000
48	44521170	Կողպեք կախովի	... %	... %	... %	... %	... %	3960	5940	... %	... %	... %	... %	... %	9900
49	44511110	Բահ փորելու	... %	... %	... %	... %	... %	12960	... %	... %	... %	... %	... %	... %	12960
52	18141100	Ձեռնոց բանվորական 1	... %	... %	... %	... %	... %	6000	... %	... %	... %	... %	... %	... %	6000
53	31684400	Վարդակ	... %	... %	... %	... %	... %	2340	2340	... %	... %	... %	... %	... %	4680
54	31686000	Խրոցակ	... %	... %	... %	... %	... %	2700	2700	... %	... %	... %	... %	... %	5400

58	44521100	Փական կախովի	... %	... %	... %	... %	... %	... %	3300	... %	... %	... %	... %	... %	3300
59	44521120	Փական ներքին	... %	... %	... %	... %	... %	... %	54000	54000	... %	... %	... %	... %	108000
62	31531600	Լուսատու ցերեկային 120սմ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	107400	... %	... %	... %	... %	107400
63	31521560	Լուսադիոդային լուսատու 50w	... %	... %	... %	... %	... %	... %	... %	36900	... %	... %	... %	... %	36900
66	31211200	Անջատիչ ներսի	... %	... %	... %	... %	... %	... %	... %	46800	... %	... %	... %	... %	46800
67	31211200	Անջատիչ դրսի	... %	... %	... %	... %	... %	... %	... %	16500	... %	... %	... %	... %	16500

68	31684400	Վարդակ ներսի	... %	... %	... %	... %	... %	... %	... %	46800	... %	... %	... %	... %	46800
69	31512430	Էլ. Շիկացման լամպ 500 Վտ	... %	... %	... %	... %	... %	... %	6600	... %	... %	... %	... %	... %	6600
70	39221420	Խոզանակ պոչով	... %	... %	... %	... %	... %	... %	13800	13800	... %	... %	... %	... %	27600
71	18141100	Բանվորական ձեռնոց	... %	... %	... %	... %	... %	... %	7200	7200	... %	... %	... %	... %	14400
76	39839100	Գոգաթիակ ավելի հետ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	10800	... %	... %	... %	... %	10800
78	44322220	Մալուխ պղնձե	... %	... %	... %	... %	... %	... %	11880	... %	... %	... %	... %	... %	11880

79	31331140	Մալուխ	... %	... %	... %	... %	... %	... %	342000	... %	... %	... %	... %	... %	**342000**
82	44331300	Մետաղալար 1	... %	... %	... %	... %	... %	3450	... %	... %	... %	... %	... %	... %	**3450**
83	44331300	Մետաղալար 2	... %	... %	... %	... %	... %	3450	... %	... %	... %	... %	... %	... %	**3450**
91	18141100	Ձեռնոց բանվորական 2	... %	... %	... %	... %	... %	41820	... %	... %	... %	... %	... %	... %	**41820**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

Հայաստանի ազգային
ագրարային համալսարան
ք. Երևան, Տերյան 74
ՀՎՀՀ՝ 01507028
ՀՎՀՀ՝ 247010053103
«Հաշվապահինբանկ» ՓԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նարգար» ՍՊԸ
Ք. Իջևան, Երիտասարդական 1/5
«ՀԷԲ» ԲԲԸ, Իջևան մ/ճ
Հ/Հ 163508008774
ՀՎՀՀ 07614133
Հեռ. 093-74-44-17, 0263-4-00-64
Էլ. փոստ: armenhasanyan@mail.ru

/ստորագրություն/Կ.Տ